Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 24/16 ծածկագրով «Երևանի Ջեմաէլետրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի լուսավորման համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի Հայտերի բացման

ք. Երևան 2 դեկտեմբերի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ղոսալմյանը

Ս. Ավագյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

Նիստին բացակայում էր հանձնաժողովի անդամ Գ. Ախոյանը:

Գնումների պլանով նախատեսված գումարը կազմում է 9 800 000 ՀՀ դրամ:

Նիստի օրակարգը

1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 24/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի լուսավորման համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 24/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ – (հասցեն՝ ք. Երևան, Արցախի փ., 4-րդ նրբ, տ 6),

1.2. « Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն:

1.3. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, Տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 9 721 562 (ինը միլիոն յոթ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների զբաղված տեղերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՝ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ աշխատանքային օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ գրաված մասնակիցին՝ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5, 5.1, 5.2 հավելվածները, կցելով նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի պատճենները, տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրությունների և այլն) պատճենները, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև հրավերով նախատեսված աշխատանքային ռեսուրսներ և տեխնիկական միջոցներ որակավորման չափանիշներով պահանջվող մնացած փաստաթղթերը :

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ենթակայանի ՀԾԳՑ թիվ 1 էներգաբլոկի լուսավորման համակարգի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցման վերաբերյալ եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

1.2. Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

Անդամներ՝ Ա. Ղուալմյան

Ս. Ավագյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան